ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ճանապարհորդութիւն Պոլիկտեսի ի Հռոմ [1] :

ԹՈՒՂԹ Է·

Պոլիկտէս առ Փիլոսորատէս, որդի Արիսոնդեայ.

Ներքին տեսիլ Հռովմայ. — Ցիշատակարանք. — Դրուելք. — Տաճարք. — Ջրանցք. — Սովորոյթք առանձնականք, և այլն :

Նորանոր գաղափարներով երևակայութիւնս լցուած, հազիւ թէ մէկ քանի վայրկեան հանգըստեան եաւէ էի, եկաւ Սիրոս զիս գտնելու։ "Եկու, ըսաւ ինծի, երթանք Հռովմայ ամենէն հրաշակաւոր տեղուանքը տեսնելու։ Յանիկուլոն լերան վրայէն տեսածներդ աչքիդ առջին պիտի պարզին. այսօր երեկուան Ճամբուն ներհակը բռնենք, և քաղքին զանազան թաղերը հանդիպինք, մասնաւոր կերպով հեռաքննութեան արժանի առարկաները զննելով։ Այս մեծ պատկերիս ամէն մէկ մասն ալ, ամբողջութեանը պէս կը զարմացընէ։ Քանի որ վրան նայիս՝ կարծես թէ հպարտանալ մը կուգայ մարդկային ձեռակերտին վրայ. Յոյն կամ Հռովմայեցի ըլլալը, զօրաւոր կամ տկար, ազատ կամ գերի, մոքէն ալ չանցներ. արտանց կ'ուրախանայ իրեն նմանեաց Ճիգը տեսնելով, և անոնց փառացը ինքզինքը հաղորդ կը սեպէ։ Աչխարհիս վրայ ուրիշ ի՞նչ տեղ կայ որ կարենայ այսչափ վսեմ պատկերներ աչքիդ առջին դնել։ Տեսեր եմ Թեբէ, Լակեդեմոն, Կորնթոս քաղաքները. բնակեր եմ հռչակաւոր Աթէնքի մէջ. և այս մեծ քաղաքաց մէջ բան մը չկայ որ Հռովմայ պայծառութեանը գաղափար մը տայ. անհունութիւն մըն է ըսեմ՝ կէտի մը դիմացը։

,, Արևը դեռ նոր սկսեր է ելլել. աւելի համարձակ կերպով կրնանք ամէն բան զննել քաղաքացւոց ժողովուելէն առաջ, թէ հասարակաց հրապարակներուն մէջ, և թէ այն տեղուանք ուր որ օտարականաց մուտքը արգիլուած է։ Այսօր իննօրեայ ըսուած վաՃառքի օրերէն մէկն է, որ ամէն ինը օրը մէկ անգամ հանդիպելուն համար ասանկ կոչուած է։ Տեսնես պիտի միանգամայն մշակը, հարուստ կալուածատէրը և շքասէր պատրիկը, ինչպէս Հռովմայ տէրութիւնը ամէն կողմէն կը վազեն, ոմանք խարդախութիւն լարելու համար, ուրիշներ զանոնք խափանելու պատՃառաւ, և դարձեալ ամէնքը՝ հասարակաց բարւոյն կերպարանքի՝ իրենց շահը փնտռելու համար ,, :

Ճամբայ որ ինկանք, խորին լռութիւն մը տիրած էր այն տեղուանքը՝ զորոնք որ քիչ մը առաջներն անհուն ժողովրդեան մը ալիքները աղմկով ու շփոթութեամբ պիտի լեցընէին։ "Այս թաղիս մէջն է, ըսաւ ընկերս, ուր Հռովմայ գլխաւոր գերդաստանները կը բնակին։ Ամէնը առանձին ընդարձակ տներ ունին, և ամէն տուն մէկալներէն բաժնուած է, որով տեսակ մը իշխանիկ կը ձևացընեն, ինչպէս որ ալ սովորաբար կը կոչեն։ Ասոնք փառաւոր պալատներ են՝ որոնց մէջ անանկ բազմաթիւ ժողովուրդ մը կը բնակի՝ ինչպէս են Յունաստանի աւանները։

,, Այդ մարմարիոնէ սիւնազարդ օրահները, ուր որ նստարաններ ալ կան, ապաստանարան են այն պաշտպանեալներուն որոնք բազմութեամբ կ'երթան իրենց պաշտպան տէրերուն մեծարանք ընելու համար։ Խիստ աղքատները սեմէն անդին չեն կրնար անցնիլ. հոն տեղն է որ իրենց ցածութեանը արժանաւոր՝ անարգ ողորմութեան մը կը սպասեն։ Տներուն դուռը նուիրական է։ Ոչ միայն ինքը իրեն առանձին գիքը ունի, այլ նաև անոր իւրաքանչիւր մասը մասնաւոր սատուածի մը պաշտպանութեանը տակն է։

,, Այդ փառաւոր Ճամբան, որ Սուպուրբեան Ճամբան կը շարունակէ, զորն որ հիմա անցանք, կ'ըսուի Նո�էրոյան Ճամբայ. որուն այսպէս կոչուելուն պատՃառը ան է որ անգագար Կապիտոլիոն գացող քրմերով լեցուն է։ Ձախ դիդ ի՞նչ ըսուած թաղ մը կայ, վասն զի զայն բաղկացընող տները կատուածի ձևով տանիքով մը ծածկած են։ Անկէց անդին է Կարմենտալ դուռը՝ որ Արեսի դաշտը կը տանի. կ'ըսուի նաև Էղէոնատոր դուռ, 'ի յիշատակ իրեք հարիւր վեց Փաբեանց գժբաղդութեանը որ այս դռնէն ելան Հռովմայէն, 274 թուականին, Վէյացւոց հետ պատերազմելու համար, և նոյն պատերազմին մէջ ամէնը մեռան։

,, Ահաւասիկ հրապարակին մէջ ենք, որն որ Հռովմայ տարեգրութեանց մէջ այնչափ հռչակաւոր տեղ մը եղած է։ Բոլոր միւս հրապարակները նոյն անուամբ կը կոչուին, բայց ասիկայ գերազանցութեանը կոչմանէ Հռովմէական հրապարակ կամ պարզապէս հրապարակ կ'ըսուի։ Առաջները ասիկայ ամենևին անզարդ անշուք տեղ մըն էր. Տուլլոս Ոստիլիոս կամարակապ Ճամբաներով և գլխաւորապէս սեղանաւորաց կրպակներով շրջապատեց զայն։ Անկէ ետքը ընդարձակ պալատներ շինեցին, ուր որ դատաստան կը կարուն, և կ'ըսուին արքոնիք. և ժողովուրդը պէտք եղած ատենը հոն կը ժողվուի, հասարակաց գործոցութեանց վրայօք խօսելու համար։ Ասոնցմէ զատ կը տեսնես նաև տաՃարներ, դահլիՃներ, հասարակաց վարժա-

---

1 Տես Հա. ԺԳ. երես 110. Հա. ԺԵ, երես 114, 146, 179, 209։

բաններ, շքեղ ապարանքներ։ Այս ընդարձակածաւալ հրապարակը զարդարող արձաններուն մէջէն մէկը՝ նոյն իսկ Հռովմէն աւելի հին է, որն որ ինչպէս որ կ'ըսուի, Եւանդր արքայէն Հերակլէսի նուիրած է, և Հերակլէս յաղթող կ'ըսուի. վասն զի յաղթականաց զգեստովը կը զարդարեն այն հանդիսից ժամանակ՝ յորում Հռովմ իր զօրավարները կը փառաւորէ։

,, Տաճարներու ոսկեզօծ արձանները, զոր կը տեսնես, Երկոտասան մեծ աստուածները կը ներկայացնեն։

,, Ահա Յանոսին տաճարը. այդ աստուածը Հռովմայ մէջ ուրիշ շատ տաճարներ ունի. բայց ամենէն հինը ասիկայ է, զորն որ Հռոմուլոս շինեց, իսկ Նումա՝ նոյն աստուածոյն անդրին կանգներ է մէջը, երկու երեսով. մատուռները անանկ յարմարցուցած են որ 355 օրուան թիւը կը ցուցնեն, և կ'ակնարկեն այն տարւոյն օրերը՝ որուն ծանօթութիւնը Յանոս կը կարծուի որ տուած ըլլայ։

,, Մեծ և շքեղ տաճար մըն ալ կայ առջևնիս՝ Սատուռնոսին ընծայուած։ Հոն կը պահուին Լեգէոններուն դրօշները և հասարակաց գանձը, որովհետև նոյն իմաստուն արքային թագաւորութեանը ժամանակը, որն որ ոսկեդար կ'ըսուի, վստահութիւնը ոչ երբէք բռնութիւն կրած ունի։ Սակայն այդ աստուածոյն համար կ'աւանդեն թէ արիւնը կը սիրէ. և ըմբիշները անոր սեղաններուն վրայ արիւն կը նուիրեն. և իրեն ընծայուած անգութ բարուցը պատճառաւ՝ Սոփոռնոսի կ'անուանեն երգիծաբան ոտանաւորները։

,, Հրապարակը՝ Հռովմայեցւոց ամենէն յաճախած տեղն է։ Հոն կ'ըլլայ բոլոր հարկաւոր նիւթոց մեծ առուտուրը. և հոն կը տեսնուին անգադար ամենէն ազնիւ բաները. հոն կը ծախուի աճուրդով թշնամեաց աւարը։ Հոն կ'ըլլուին ընտրութիւնները, և Հռովմայ ժողովրդեան զուարճութիւնները. միով բանիւ, հոն կ'որոշուի տերութեան օգուտը, և տիեզերաց բաղդը։

,, Այդ յիշատակարանը՝ որ վաճառականոցին մէջ տեղը կը տեսնես, սկզբան շինուած էր նաւի ցլուսկներովը, զորոնք 416 թուականին Հռովմայեցիք Ենոիոնի բնակիչներէն առին, և իբրև իրենց յաղթութեանը նշանակ մը հոն հաւաքեցին։ Բեմ մը կայ, ուսկից ճարտարախօսք կ'ատենաբանեն ժողովրդեան։ Ժամանակը այդ շէնքը փճացուցեր է, բայց նորէն նոյն ձևին վրայ շինուեցաւ, և հիմա ալ դարձեալ նոյն վախճանին կը ծառայէ։ Շատ անգամ եղեր է որ՝ ինչպէս Ակրամազդայ գահէն, անկէց ելեր է բոլոր ազգերը սարսափեցնող կայծակը։ Բեմին քով տեսնուած արձանը, Մարսիաս երգիծաբանը կը ներկայացնէ. և կը յիշեցնէ գառասպազներուն գառի գիպուածները, և յաջող գառասպանի մը վտանգները։ Քիչ մը հեռու, Կապիտոլեան լերան գառ'ի վայրը Ռոմէական ըսուած շէնք մը կայ, ուր որ մէկքանի պարագայից համեմատ ծերակոյտը կը ժողվուի։ Հոն ատոմիճաններով կ'ելլըցուի. և այդ ատոմիճաններէն է որ Տարկուինոս՝ Սերուիոս Տուզիոսը վար նետեց։

,, Հրապարակին դիմացը կը տեսնես Կապիտոլիոնը. ժամանակը յարմար չէ հոն մտնելու. միայն դրսէն զննելը բաւական սեպէ։ Քիչ առեղէն ա-

ւելի հանդիսաւոր կերպով կը տեսնես զայն, և ակնառութեամբ կ'ըլլաս հոն կատարուած հանդիսից փառաւորութեանը։

,, Կապիտոլիոնին եռեղն է Տարպէեան ժայռը, ուսկից ըստ Երկոտասան Տախտակաց օրինացը՝ մատնիչները վար կը դահավիժեն։ Կարծես թէ կամօք ընտրուած է այդ տեղը յաղթականաց իմացընելու համար, որ փառքն իսկ իրեն վտանգները ունի, և թէ փոխարինէն պատիժը քայլ մը միայն է։

,, Այդ վայելչաշէն տաճարը ճաղաք Աթենքէն նուիրած է յանմոռաց յիշատակ Հռովմայեցի կանանց հայրենասիրութեանը։ Գաղղիացիք Կապիտոլիոնը պաշարած ըլլալով՝ Հռովմայեցւոց ազնիներուն լարերը կը հատանին. ան ատեն անոնց կընիկները իրենց մազերովը անոնց լար կը շինեն. Ծերակոյտն ալ փոխարէն այդ տաճարը կանանց պաշտպանին նուիրեց, և Ատոլիկը իրեն գեղեցիկ զարդէն զրկուելով՝ աւելի երկրպագուներ գըտաւ։

Երբ Սիրոս այս խօսքերը ըմբնցընելու վրայ էր, քովերնէս մարդիկներու խումբ մը անցնելու եղաւ, որոնց հագուստը և ծանր քալուածքը քուրմ ըլլալնին կը յայտնէր։ Հետերնին յղի կով մը կը տանէին, որուն ոսկեզօծ եղջիւրները ծաղկեայ պսակներով զարդարուած էին։ Անոնց ետևէն սուգի երկայն զգեստներ հագած կնիկ մը կ'երթար, որուն քօղը ինչուան գետինը կ'իջնար։ Զարմացմամբ կը զննէի այն հանդէսը, և կը ջանայի իմանալ ինչ բանի որոշուած ըլլալը, երբ տեսայ որ Հերա գիցուհւոյն տաճարին ճամբան մտաւ։ "Ի՞նչ բան է, ըսի Սիրոսին. Հռովմայ գիրը տաճնկ ողջակէզ կը մատուցուի։ Այդպիսի զոհեր՝ բնութեան անարգանք են, և նոյն իսկ ամենէն վայրենի ազգաց ալ ատելի կ'երևան։ — Իմաստուն Նուման է, պատասխանեց, այդ սրբութիւնը հաստատողը, և այդ անունը միայն բաւական պիտոր ըլլայ քուկին գաղմունքդ փարատելու։ Այդ սովորութիւնն որ կը պահպանեա՝ անոր համար հաստատուած է որ այլ և այլ զեղծմունքներ արգելու, որոնք կրնան ընտանեաց մէջ խռովութիւն ձգել։ Այրի կանայք չեն կրնար տասը ամսուան միջոցէն առաջ կարգուիլ. անոնք որ առանձին պատճառներու համար որոշեալ ժամանակին սպասել չեն կրնար, պէտք է որ նոր կոպ մը հատատեալէն առաջ Հերա գիցուհւոյն սեղանին առջևը յղի կով մը ողջակիզեն։ Ժողովրդեան աչքէն փախչելու համար է որ ատիկայ այս ժամանակը ընտրեր է, և գեռ ալ կը վախնայ տեսնուելէն. այն քօղերն ալ որոնցմով որ ինքզինքը ծածկած է՝ ոչ թէ ամօթխածութեան նշանն է, որչափ իրեն ըրածներուն խոստովանութիւնը։ Թէ որ ժողովուրդը զինքը տեսնելու ըլլայ, և ոչ իրեն ընելու կրօնական արարողութիւնը կրնայ զինքը անոնց նախատինքներէն փրկել. այլ նաև ինչուան իրեն բնակութիւնն ալ ետևէն կ'իյնան, որ աւելի ատատիկ նախատինքներով վրէժը առնեն։

,, Թողուանք հիմա այդ կնիկը խաղաղութեամբ իր խորհրդաւոր զոհը կատարելու, և մեր ճամբան շարունակենք։ Կուիրինալ լեռն որ կ'ելլանք, կը տեսնես նախ Միթրէանոսի տաճարը զորն որ 387 տարւոյն Փուրիոս Կամիլլոս Դիկտատորը կառոյց, երկուց կարգաց հաշտութեան առթիւ։ Հոն կը ժողվուի ծերակոյտը պէտք եղած ատեն։ Քիչ

մը անգին է Այրան Բաղդին տաճարը, զորն որ Սերուիլիոս Թագաւորը կանգներ է, 'ի յիշատակ անչափ բարութեանց՝ որոնցմով որ նոյն դիցուհին իր երկայն կեանքը լցուցեր էր. նոյն բաղդը նաև առաջնորդեց իրեն յաջորդներուն։ Հռովմայեցիք աւելի այս դիցուհւոյն՝ որ ամէն աստուածներէն աւելի զօրաւորն է, պաշտօն կը մատուցանեն, որուն նաև այնպիսի մակագիրներով տաճարներ նուիրած են, որ իրեն բարերարութիւնները կը յիշեցնեն։ Կայ պաշտօն նաև Կանոյի Բաղդին, Հռովմայ պարիսպներէն դուրս, այն տեղը ուր որ Կորիոլանոսին մայրը և կնիկը անոր արդար ցասմանը յաղթեցին. նոյնպէս նաև Կարմենտա Բաղդին, Նախածնութեան Բաղդին, Յուսալից Բաղդին, որն որ գժբաղդութիւնները կը մերժէ, և այլն։ Հռովմայեցւոց կրօնասէր ժողովուրդը 'ի սկզբանէ հասկցեր է, որ մարդկային կարողութենէն վեր կարողութիւն մըն էր իրեն բարեբաստութեան պատճառը, և օրինաւոր յարգանք անոր մատուցանելով, անդադար նոր նոր բարիքներ ընդուներ է անկէ։

,, Բայց արդէն Ճամբաները քաղաքացիներով սկսեր են լցուիլ. տես թէ ինչպէս իրարու կը վազեն իրենց օրական պիտոյիցը պէտք եղած կրակը հոգալու։ Մեծ յանցանք է ժխտելը ինչ և իցէ մարդու. բայց ա՛լ աւելի մեծ է խորանի կրակէն փոխ առնելը։ Ատոնք պաշտպանեալներ են որ միշտ ամենաՃիշդ են օրուան ծագելուն պէս իրենց տէրերուն դուռը գտնուելու։ Մէկալներնք դասաւորներ են որ իրենց ինկած դասատանարանները կ'երթան։ Եռանուն ալ շատ մը դասախազներ կան, որոնք առանց վայրկեան մը կորսընցնելու, կը ջանան իրենց դասին արդարութիւնը ցուցընել, կամ խոսամունքներով անոնց սիրտը շարժել։ Այդ երկու երիտասարդները հիւպատոսի մը տղաք են, որ ամէն առտու հռչակաւոր իրաւագիտի մը քովը կ'երթան դաս առնելու համար. եռանուն գերի մը կայ որուն յանձն է զանոնք տանիլ ու բերելը. անթին տակը պզտի արկղ մը կը տանի, որուն մէջ մոմով ծեփած տախտակներ կան, սլաքներ և ուրիշ գործիներ գրելու հարկաւոր։ Ա՛ռ ուրիշները դարձեալ, որ խմբովին կը քալեն, աւելի վարի աստիճանի են. պարզ քաղաքացւոց տղաք են, որ հասարակ վարժապետ մը, ընկերական նախնական պիտոյիցը վերաբերեալ դասեր առնելու կ'երթան։ Ա՛ռ զուարթութիւններին քիչ ատենէ վարժապետին խարազանէն պիտի մարի։ Դիտէ թէ ինչ կերպով զիրար կը բարևեն։ Բարի ըյո, առաւօտեան ողջոյնն է, ողջ ենք երեկոյեանը, Բարով հաս երբ իրարմէ կը բաժնուին։ Օրուան ծագելուն պէս մեծ փոյթ ունին անոնց քովը կանխելու որոնց հպատակութեան և յարգանաց նշան տալ կ'ուզեն, և կամ ծառայութեան յոյս ունին։ Այդ սովորութիւնը ինչուան նաև բանակի մէջ ալ կը կատարուի։ Արշալոյսը ծագելուն պէս զինուորները հարիւրապետաց կ'երթան, որոնք հեսերնին զինուորական Տրիբունից վրանը կը տանին, և բոլորն ալ միատեղ միաձայն աղաղակով կ'երթան զօրապետը կը բարևեն։

,, Ամէն դիէն կը տեսնես գեղացիները, որ իրենց երկրին այլ և այլ բերքերը Հռովմ կը բերեն։ Ատոնք որ այդ մեծ և գեղեցիկ Ճամբէն կուգան, որ Կուիրինալ լեռնէն ինչուան Կապիտոլիոնի տաճարը կը տարածուի, և իրեն լայնութեամբը ըսուած է լայն Ճամբայ, այն լեռներէն կ'ինջնեն ուակից կը բերեն Տիբերիս։ Բերածնին բազմաթիւ հօտեր են, որ թէ ողջակիզն որոշուած են և թէ քաղքին պաշարի։ Եզները Եղանց վաճառանոցը պիտի տարուին։ Այդ հրապարակին մէջ տեղը պղնձէ փառաւոր ցուլ մը կը տեսնուի, որ ինչ բանի որոշուած ըլլալը կը նշանակէ։ Խոզերը Խոզից վաճառանոցը կը հասնին։ Կարմենդալեան դռնէն անցին Ընդեղինոց վաճառանոցն է ուր բանջարեղէնները կը ծախուին. ձուկը՝ Տիբերին մօտ վաճառանոց ֆկանոց ըսուած տեղ մը կը ծախուի։ Ռուտեան ամէն մէկ ճիւղը իրեն մասնաւոր որոշեալ տեղը ունի, ուր որ ծախողը յոյս ունի առնող գտնելու, և գնողը ուզածը գտնելու։ Ինչուան նաև ազնիւ կերակուրները, օրուան ո՛ և իցէ ժամը համապատասխ վաճառանոցը կրնան գտնուիլ։

,, Այն այլ և այլ տեղերը, վերակացուներ և պաշտօնեաներ, անդադար կարգ կանոնը պահելու կը հսկեն, որպէս զի կարենան ամէն տեսակ խաբէութեան դէմը առնուլ։ Նոյն իսկ ժողովրդեան Տրիբուններն ալ այդ պաշտօնները չեն արհամարհեր, և անոնցմէ մէկը միշտ շարունակ առաջնակայ է Խոզից վաճառանոցին մէջ։

,, Անմիջապէս մեր դիմացը կը տեսնես որ գործաւորաց խումբեր կ'անցնին, որոնք ուսերնին իրենց արուեստին գործիքները զարկած աշխատութեան տեղերնին կ'երթան աշխատելից օր մը սկսելու իրաւ, բայց շփոթութենէ և անհանգստութենէ ազատ։ Ամէնը այլ և այլ ընկերութեանց միացած են, ամէն մէկը իրեն առանձին գլխաւորովը զորն որ վերակացու կ'անուանեն։ Այդ սահմանադրութիւնը Նումային կը կարծուի, որն որ միշտ իր ժողովրդեան երջանկութիւնը մտածելով, ամենայն ջանք ըրաւ սիրելի ընելու անոր իրեն պարտքերը և իրեն հայրենիքը, և ամենէն նուաստ քաղաքացիներուն դասերն ալ չմոռցաւ. վասն զի իրենք են ծառին արմատները. և որպէս զի գլուխը բարձրանայ, պէտք է որ զիրենք սնուցանող գետինը հաստատուի։

,, Այդ բազմութեան մեծ մասը Կուիրինալ և Եսկուիլինեան լերանց զառ 'ի վայրերը կը բնակին։ Այն տեղուանքը քաղքին կեդրոնէն աւելի հեռու ըլլալով, աղքատաց բնակարաններուն գինն ալ համեմատ է։

Կը շարունակուի։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ